

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԳԵՂՐԴ ԲԸՋԻՆԶԵՎԵՍՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԻԵՍԼ

Քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ դոնուող պղղերը գեռ չեն ըմբռնում գեղարուեստի նշանակութիւնը և մարդկացին հոգեկան աշխարհի վրայ նրա ոնկցած աղղեցութիւնը. Արդափիսի աղղերի մէջ հարկաւ գեղարուեստը զարգացած չի լինի և մարդոց ճաշակն էլ շատ չի զանաղանուի սկզբնական կամ, ինչպէս սովորական է ասել, բն ական աղղերի ճաշակագիտութիւնից. Որչափ առաջ են դնում աղղերը քաղաքակրթութեան շաւդի վրալ, ալնչափ և նրանց ճաշակը նրբանում է և գեղարուեստն անհրաժեշտ պահանջ զառնում:

Մենք, հայերս, զեռ նոր ենք սկսում ճասկանալ և ըմբռնել գեղարուեստը, նոր ենք գրաւուում նորանով, ըաց յեռ և չենք ճասել այն աստիճանին, որ գեղարուեստը պահանջ լինի մեր հոգեկան, ներքին աշխարհի համար. Վերցնենք օրինակ նկարչութիւնը. չնայելով որ մեր արեելեան քուոն երևակալութիւնը և մեր երկրի գեղատեսիլ բնութիւնը քաւականաշափ նիւթ են մատակարարում նկարչի վրձինի համար, այնուամենախի. մինչև ալժմ չենք ունեցել մի առաջանդաւոր նկարիչ, որ օգտուէր ալդ բնական հանդամանքներից. Գուցէ մեզ ասեն՝ ապա Ալվազովսկին. ճիշդ է, Ալվազովսկին հաւ էր, բայց նրա հանճարը բացառիկ երևութ էր և ոչ մեր կեանքի, մեր հալրենիքի բնութեան արդիւնք. Նա լայնածաւալ ծովի, ընդարձակ ովկիանոսի իշխանն էր, որ մեր հալրենիքի սահմաններից դուրս է դանւում. նա մի համաշխարհալին մեծութիւն էր, որի մօտ աննկատելի կերպով կորչում էր նրա ազգութեան լատկանիշը.

Ներկալումս հրապարակի վրալ երնում են մի երկու միջակ տաղանդի տիբ հայ նկարիչներ, որոնց մէջ աշխի է ընկնում պ. Գէորգ Բաշինջաղեանը, իրեւ միմիալին իւր արուեստին նույիրուած մարդ, որ կողմնակի պարագմունքով չէ զբա զւում և ամեն կերպ աշխատում է առաջադիմել, ուսումնասիրել, կատարելագործուել, Վերջին երկու ու կէս տարին՝ նա ահազին զոհորութիւններ անելով անցկացրեց Պարիզում՝ որպէս զի Կովկասում նստած մի կէտի վրալ չմնալ, ալլ տեսնէ աւելի լաւը, շփուի արուեստակիցների հնտ, նոր հովերառնէ, նոր բան արտադրէ. մի խօսքով առաջ գնալ, կատարելագործուին:

Այս ձմեռ կրկին վերադառնալով Պարիզից իւր հալրենի քաղաքը, Բաշինջաղեանը պատրաստուեց իւր նոր նկարած պատկերները հրապարակ հանենլու և արդ նպատակով Փառաց տաճար, կոչուած թանգարանում ի ցոյց դրեց իւր մեծ ու փոքր նկարների ժողովածուն. Ալդ նկարներն ըստ մասին վերջին տարիների արդիւնք են, ուրեմն և նոր թիֆլիզիների համար:

Մանենք ընթերցող մի երկու ժամով Փառաց տաճարը, դիտենք պատկերները և կարդանք Բաշինջաղեանի բանաստեղծութիւնները. ալ՛, բանաստեղծութիւնները. Ամեն մի տաղանդաւոր նկարիչ բանաստեղծում է. Նրա բանաստեղծութիւնը տողերով, բառերով ու վանկալին լանգերով չէ գրուած, բաց վրձինի ամեն մի շարժումը մի վանկ է կազմում և ամեն մի նկարը՝ մի բանաստեղծութիւն նկարի մէջն է ամիունում արուեստագէտն իւր հոգու մի մասը՝ երեսկալաւութիւնը, զգացմունքը, դիտողական ոլժը. Խնչպէս որ լուրջ բանաստեղծութեան նիւթը պէտք է ուսումնասիրուի, ալնպէս էլ իւրաքանչիւր նկարի բովանդակութիւնը պէտք է նախապէս հետազոտուի. Խնչպէս բանաստեղծութիւնը, ալնպէս էլ նկարը պէտք է թափանցէ մարդուս հոգեկան աշխարհը, զգացմունքներ առաջացնէ, հաճուք, ահաճութիւն, ուրախութիւն, վիշտ պատճառէ:

Ահա Բաշինջաղեանի երկու բանաստեղծութիւնները. մէկի վերնագիրն է «Փոթորկից առաջ» (№ 1) միւսինը՝ «Փոթորկից և տուլ» (№ 2). Նախում ենք և կարդում. Փակլում է գեղածիծալ արեւ և իւր ջերմ ճառագալթներով տաքացնում է երկիրը. Երկինքը պարզ ու ջինջ է, Քրանավաս-

տակ երկրագործի դառն աշխատանքով յանած արտը հասունացել, սկսկու դոյն է ստացել, մի քանի օր ևս և ահա՝ հընձուորները մանդաղները սրելով պէտք է հնձեն հասկերը, խուրձ կապեն, կալսեն և ոսկեհատիկ ցորենն ամբարելով՝ ամբողջ ընտանիքի տարուալ պաշարը պատրաստեն, մի մասն էլ ծախեն՝ տան պէտքերը հոդան, պարտքերը տան... Դիտողը զգում է ալս ամենը և կարդում արտին մօտեցող ժըպտադէմ երկրագործի երեսի դժագրութեան մէջ, թալց աւաղ. լանկարծ կուտակում են ամպերը, որոսում է երկինքը, փարլում է կաթակը, երկնքի ջերի խցանները հանւում են և տեղում է լորդառատ անձրեը, բարձրանում է փոթորիկ. գետի նման հեղեղներ են վազում դաշտի միջով և... արտի կանգուն հասկերի ցողունները կոտրտում, ջախջախում, վալը են թափիում զետնին. սկսեգուն սաւանի տեղը լճակներ են զուանում. մնաս բարեաւ ամբողջ տարուալ դառն քրտինքի վաստակ, մնաս բարեաւ ամբողջ ընտանիքի միակ լուս. Անցնում է փոթորիկը, պարզում է երկինքը, գիւղացին ու զեղջկուհին զլիիկոր կանգնած են արտի կողքին և սրտի խորին վշտով նալում են աւերուած ցանքսին ու մրմիջում....

Իանանք մի ուրիշ էջ. (№. 60)

Կանգնած էք մի պար սպի կամարաշչէն մոււտքի առաջ և ձեր աչքերն ուղղում դէպի ներս. երևում են աւերակի կոտսեր, հեռու ցցուած է բարձր մինարէն. գմբեթազուրկ եկեղեցու արտաքին պատերի քանդակները ցուց են տալիս, որ մի հասարակ տաճար չէ տեսածոյ, ալլ մի արքայանիստ քաղաքի մալր տաճարը. Տարաբաղդ Անիի աւերակներն են. մտքիդ առաջ կինդանանում է Բագրատունեաց փառաշէն մալրաքաղաքն իր աւենդական հազար ու մի եկեղեցիներով, որոյ քաղաքակրթութեան ապացուց՝ հասարակական շէնքերով, պաւատներով և ալլն. Երևակալութիւնդ փոխադրում է քեզ անցեալ զարերը, ստուերների նման զիտակցութեանդ մէջ վերակենազանանում են պատմական անձինք, դէպքեր, արկածներ, աւերմունք, երկրաշարժ, գաղթականութիւն, Նրիմի, Ահաստանի հալեր, զաւանավոխութիւն, Լոզուի կորուստ, ազգականութեան կորուստ.

Ակդ մի պօէմա էր. ահա և մի փոքրիկ, գողտըրիկ ոտանաւոր, (№. 10.) Անիի մալր եկեղեցին. ալս կարծ բանաստեղծութիւնը նկարագրում է գեղեցիկ կերպով հալոց

գեղարուեստի մի ճիւղը՝ քանդակագործութիւնը, ինչ հրաշա-
լի քանդակներ, ինչ սիրուն ո՞ւ բիւզանդականի և արաբա-
կանի խառնուրդից մի լնցնուրդն ստեղծագործութիւն հայ
հանճարեղ վարպետների, Ամեն մի հատուածը մի նրբութիւն
է բովանդակում, ամեն մի գիծը որոշ կանոն,

Թողնենք անցեալը, մի փոքր ճանապահորդենք ուազ-
մալիրական ճանապարհով, տեսնենք էլքը ու ու ու ը (№. 36),
կ ա զ բ է կ ը (№. 43). Հիանանք դրանց սպիտակոփառ զա-
զաթներով, մշուշապատ ձորերով և մի փոքր կանդ առնենք
Դս րիալի կրծում (№. №. 5 և 40). Ինչ ահանլի ուղղահա-
լեաց ժալուեր, ինչ սարսահելի անդնդախոր ձոր. ձորի վրա
տարածում է անհուն, թափանցիկ մշուշը, իսկ լատակում
վաղող ջրի փօխարէն երեսում է ձիւնափալ սպիտակ փրփրա-
լից հոսանքը, որ ահադին ժալուերի միջից ուրումոլոր դուրս
է սողում և աղմկալի զոչիւնով առաջ զլորւում Ակս վալրերի
դարաւոր պատմական անցքերի վկա՞ հեղիկ լուսնեակը տըխ-
րադէմ և թախիծով զլուխը դուրս է բերում ամպերի միջից
և ազոտ լուս սփռում վրաց սիրելի և մողովրդական թամար
թագուհու ամրոցի վրալու..

Վերադառնանք Ռազմա-վիրական ճանապարհից և ուղե-
ւորուենք ոչ պակաս գեղահրաշ Դիլիջանի պատուաներով դէպի
Ներևան. իջանք «Սիմէօնովկա» կալարանից և ահմ գնում
ենք Սեանալ լճի եղերքով. ինչ գեղեցիկ տեսարան. երեկու
է, (№. 17) սպիտակափալ նուրբ բամբակեալ ամպերը կու-
տակուել են լճի կապտագուն մակերեսութի վերալ, հեռուից ե-
րեսում է Սեանալ պատմական կղզին, հալ միալնակեացների
բնակալարն ու հոգեորականների պատմատեղին՝ իւր աւան-
դական ինքնուրուն կարգ ու կանոնով, երկար և լաճախ կըր-
կնուող ժամասացութեամբ Սպասինք մինչև անձրեն անցնի
(№ 6), լուսինը ծագի (№. 13) և ճանապարհներս շարունա-
կենք դէպի Ներևան, ինչ փառահեղ տեսարան. ծերունազարդ
Արարատ Մասիսը կանգնած է առաջդ իւր լիսեմ, մարդուս
զգացմունքները տակն ու վրալ անող կերպարանքով. ծովա-
ծաւալ դաշտի միջից բարձրանում է ալդ մարդկութեան ա-
ւանդական երկրորդ խանձարուրք. Արեւ նոր է ծագել (ալս
պատկերը նոր էր ի ցոլց դրուած և №. չունէր) և սիրուն
շողքեր զցել ձիւնափալ դադաթին. մեղմիկ ճառագալթները
համբուրելով սարի կատարի մշտասան սպիտակաւուն զան-

գուտեր՝ իջել են սոտ և լուսառորել գիւղական տան պատուհանները, ձալոց աշխարհի կրոնկներն էլ շարան-շարան՝ կոտըրտած դիմ կազմելով սբանում են օդի մէջ, որպէս զիօթ արք ի կ մը թերեն ոչքը ճանապարհին մասցած Վասպուրականի ալմոր արծուվն։

Սակայն բաւական է, աշքներս լունեց, մը փոքր հանգստանք ալս նշղարիների (գրանք, weissbischle) զով անտառում (№. 12) և կարդանք Բաշխնշաղեանի ամենասիրոն բանաստեղծութիւնը, նրա գլուխ-գործոցը։ Տեսէք, ինչպիսի ներդաշնակութիւնի վանկի, հնչիւնի, լանգի, չեղտի և բովանդակութեան, բնութիւնն ինքն է, կարծես արուեստն ու արհետը իստառը չեն։ Աշուն է, ծառերի տերներն սկսել են գունատուել Նախկինք անտառի սկզբում գտնուող ալս մի քանի հնացած նշղարիների բներլն։ որքան բնական, որքան մանրամասն ուսումնասիրուած, արդանդ կալ թէ բուն, թէ ճիւղ, թէ կոճղ, թէ մամռապատ կեղե, թէ տերեն, Դուք զումենք, որ վարպետի դործ է։

Բաշխնշաղեանի վրձինը հալրենաշունչ է, ինչպէս որ հալրենաշունչ էին Ալիշանի, Գամառ Փաթիպալի գրիշները։ Թող ասին թէ բանաստեղծութիւնը, զեղարուեստը հալրենիք չունի. ալդպէս ասողները մոռանում են մարդուս անհատական հոգեկան աշխարհը։ Դեղարուեստի էութիւնը նրա չոր ու ցամաք խիստ գիտնական կանոնաւորութեան մէջ չպէտք է պարտակուի միայն, ալլ պէտք է ի նկատի ունենալ նաև մարդուս հոգեկան աշխարհը, զգացմունքները։ առանց ալդներքին ըմբռնողութեան ամենաքաշալի պատկերն անզամ գորնզգոյն ներկուած պաստառից չի զանգանուիւ։ Մեր գիտակցութիւնը, մեր հոգեկան ըմբռնողութիւնն է պատկերին, անշունչ առարկալին, հոգի, շունչ տուողը և արժէքը որոշողը։

Ես, որ շարաբներավ հիացած դիտուել եմ աշխարհիս ամենանշանաւոր հին և նոր հանճարների վրձինների արտադրութիւնները՝ Լօնդոնի հոչակաւոր Քրիստիշ մուղէլում, Պարիզի հանրահռչակ (Լուվրում), Բեռլինի «Նացիոնալ-Գալերիում», Վիեննայի «Մարիա-Թերեզայի» թանգարանում, Դրեզդնի, Միլանի և ալլ եւրոպական քաղաքների պատկերապահներում, որոնց թիւը տասնեալ ու հարիւր հազարների է հասնում, ամենակին արհամարհական ժպիտով չուուրս եկալ մերաշխնշաղեանի փոքրիկ պատկերահանդէսից։ ինչու, որովհե-

տե իմ հոգեկան աշխարհը բաւականութիւն զգաց՝ իմ հաւրիսի աշխարհը գեղարժւեսափ նիւթ դարձած տեսնելով.

Բայինջաղեանի պատկերահանդէսը նորից աղացուցեց, որ նկարիչը շարունակում է կատարելազգործել իւր վրձինը. նրա ուսումնասիրութեան նիւթն ալժմ աւելի բազմակողմանի է, տեխնիկան աւելի զարգացած։ Տիխիսի հասարակութիւնն անուշաղիր չթողեց նկարչին, մօտ 5000 ալցելու ունեցաւ ցուցահանդէսը. սական մի բան ուշադրութեան չառնուեցր նրբ մասնաւոր անհատ նկարիչը. իւր արուեստով ապրուստ հալթալթող մարդը, հրապարակ է հանում իւր աշխատութիւնների ժողովածուն՝ երկու նպատակ ունի. մէկ, որ հասարակութիւնը տեսնէ, քննադատէ, գնահատէ նրա վաստակը եւ երկրորդ, որ արդ նկարները հաւանողները գնեն, գրամ տան, որ նկարիչը նսխ ապրէ, երկրորդ իր արած ծախսերը ծածկէ. և երրորդ՝ շարունակէ աշխատելի Զէ որ ամեն մի նկար բացի զործ դրած ժամանակից և աշխատանքից, որոշ ծախք ունի. զեռ ալլ ոչինչ. նկարիչը հօ իւր առանձնասենեակում նըստած չէ պատրաստում Արարատի, Սևանի, Անիի, Դարիալի կրծի և ալլն պատկերները. Նա պէտք է ճանապարհորդէ, գնալ անձամբ տեսնէ ալն, ինչ որ նրա վրձինը պաստառին պէտք է ներշնչէ. Խոկ արս բոլորը ծախք և նիւթական միջոցներ են պահանջում. հասարակութեան միջոց ունեցող անդամները պէտք է գնեն նրա նկարները և ալրպիսով թէ իւրնց զանիճները զարդարեն և թէ նկարչին միջոց տան իւր զործով զբաղուելու և չուսանատուելու Բայինջաղեանի նկարները համեմատաբար թանկ չեն գնահատուած և մատչելի են մեր միջին զառակարգի անհատներին. չնակելով այս հանգամանքին ցուցահանդէսի տևողութեան ընթացքում ծախուել են միմիան 30 փոքր նկարներ. իսկ լուրջ և մի փոքր աւելի արժէք ունեցող նկարներից նոյն իսկ մէկն էլ չէ ծախուել։ Շատ պարզ է. ցանկացողները փող չունեն, իսկ փող ունեցողները ցանկութիւն չունեն. Նկարիչն բնչ անէ 60—70 շըրջանակների մէջ դրուած պատկերները. տեղ ունի, որ իւր տանը կախէ և ինչի համար.

Միջոց և գեղարուեսափ մասին գաղափար ունեցող պարոններ, անտարբերութիւնն լանցանք է ձեր կողմից. ձեր հալրենի երկրի սքանչելի բնութեան մի մի հատուածներն աւելի լաւ զարդ պէտք է համարէք ձեր դահլիճների պատերի

համար, քան թէ եւրոպական աննշան վարպետների գործերը կամ թէ նշանաւոր գործերի կաղապարները.

ԴԵՂԱՍԻՐ

ԳԻՏԱԿԸՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արխենալ, բացի ինա, թոքախոր եղջերաւոր անասունների մէջ.

ԱՐԽԵՆԱԼ. Այս անունով նոր գեղ է դանուել, որ, եթէ հաւատանք փրանսիացի բժշկների վկալութեանց, ահծ ապագալ ունի. Ալդ գեղը առաջին անգամ փորձեցին հնացած ձահճալին տենդոլ (մալարիք) հիւանդների վերալ, որոնց քինան ոչինչ օգուտ չէր տալիս. Հետեանքը փալուն եղաւ. Ալդ հանգամանքը խրախուսեց բժիշկներին գործադրել ալդ գեղը և ուրիշ հիւանդութիւնների—օրինակ, թոքախորի դէմ. Բժշկապես Ռոբէնը զեկուց Փարիզի գիտութեանց ճեմարանին, որ ինքը ալդ գեղը փորձել է տասներկու թոքախորվ հիւանդների վերալ. Դրանցից 4-ը հիւանդութեան առաջին աստիճանի վերալ էին գտնուում և արխենալը նոցա վերալ հրաշալի աղջեցութիւն գործեց. հիւանդների մարմնի քաշը աւելացաւ, նըրանք սկսեցին իրենց շատ լւս զդալ. Զորուը գտնուում էին հիւանդութեան երկորդ աստիճանի վրալ և արխենալի գործադրութիւնից նրեքի զրութիւնը բաւական լաւացաւ. վերջապէս վերջին չորսը գտնուում էին հիւանդութեան վերջին աստիճանի վրալ, նոցա սաստիկ նեղացնում էր տենդը եւ-արխենալի գործադրութիւնը նոցա զրութիւնը անհամամատ թեթևացրեց. տենդը կտրուեց և նոցա մարմնի քաշը սկսեց աւելանալ:

Թոքախոտաւոր հիւանդներին օրական կարելի է տալ ամենաշատը 5 սանտիգրամ արխենալ. Այս գեղը զործադրուել է ֆրանսիալի հիւանդանոցներում և կլինիկներում ու ամեն տեղ հետևանքը բաւարար է համարուել. Պակաս լաջողութիւն չի ցուց տուել ալդ գեղը և աստմալ կոչուած հիւանդութեան դէմ գործադրելիս. Նարբոնում մի հիւանդ, որ հնացած աստմակ ունէր, միանգամայն ազատուեցաւ ալդ հիւանդութիւնից արխենալի չնորհիւ.

Արխենալով բժշկեցին և մի հիւանդ, որ ունէր երիկա-